



ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՆՈՒՐԴ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» հոկտեմբեր 2019 թ.

թիվ 27-Ա

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՀԱՆՐԱՅԻՆ
ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 6-րդ կետերով՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհուրդը որոշում է.

Հաստատել պաշտոնական վիճակագրություն օգտագործողների հանրային խորհրդի աշխատակարգը՝ համաձայն հավելված 1-ի:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վիճակագրության պետական խորհրդի
2019 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 27-Ա որոշման

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգը կարգավորում է պաշտոնական վիճակագրություն օգտագործողների հանրային խորհրդի (այսուհետ՝ Հանրային խորհուրդ) գործունեության հետ կապված հարաբերությունները:

2. Հանրային խորհուրդն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքով և սույն աշխատակարգով:

II. ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Հանրային խորհուրդը Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի (այսուհետ՝ Պետական խորհուրդ), Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նախագահի և պաշտոնական վիճակագրության այլ արտադրողների՝ հասարակական հիմունքներով գործող հիմնական խորհրդատվական մարմին է՝ Հայաստանի Հանրապետության պաշտոնական վիճակագրության համար ռազմավարական նշանակություն ունեցող հարցերի մասով:

4. Հանրային խորհրդին օրենքով վերապահված են հետևյալ իրավասությունները.

1) ներկայացնում է առաջարկություններ վիճակագրական ծրագրերում հասարակության առաջնահերթ տեղեկատվական պահանջմունքների արտացոլման ուղղությամբ, վիճակագրական ծրագրերի իրականացման և ռազմավարական զարգացման վերաբերյալ.

2) խորհրդատվություն է մատուցում պաշտոնական վիճակագրության սկզբունքների պահպանման վերաբերյալ.

3) Պետական խորհրդի հաստատմանն է ներկայացնում Հանրային խորհրդի աշխատակարգը.

4) առաջարկություններ է ներկայացնում վիճակագրական ծրագրերի վերաբերյալ.

5) գրավոր կարծիք է ներկայացնում վիճակագրական ծրագրերի կատարման հաշվետվությունների վերաբերյալ:

5. Հանրային խորհուրդը կարող է կազմակերպել քննարկումներ և տալ խորհրդատվություն ազգային վիճակագրական համակարգի ներսում համագործակցության արդյունավետության վերաբերյալ:

III. ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

6. Հանրային խորհուրդը կազմված է 11 անդամից, որոնք ներկայացնում են տարբեր ոլորտների օգտագործողների: Պետական հատվածի ներկայացուցիչները չպետք է Հանրային խորհրդում մեծամասնություն կազմեն:

7. Կոմիտեի նախագահն ի պաշտոնե Հանրային խորհրդի անդամ է:

8. Հանրային խորհրդի անդամները, բացառությամբ Կոմիտեի նախագահի, նշանակվում և ազատվում են Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ պաշտոնական վիճակագրության հիմնական օգտագործողներ հանդիսացող պետական մարմինների՝ դրամավարկային, հարկաբյուջետային, տնտեսական և սոցիալ-ժողովրդագրական քաղաքականության լիազոր

մարմինների և պաշտոնական վիճակագրության այլ օգտագործողների՝ գիտակրթական հաստատությունների ու ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացմամբ:

9. Հանրային խորհրդի կազմում փոփոխությունները կատարվում են Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ:

10. Հանրային խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվում են՝

- 1) պաշտոնից ազատվելու դեպքում,
- 2) իր դիմումի համաձայն (հասարակական կազմակերպության դեպքում),
- 3) Հանրային խորհրդի նիստերին առնվազն 3 անգամ անհարգելի

բացակայելու դեպքում:

11. Հանրային խորհուրդն իր կազմից ընտրում է Հանրային խորհրդի նախագահ, որը չի կարող լինել պետական մարմնի ներկայացուցիչ:

12. Հանրային խորհրդի անդամները, այդ թվում՝ Հանրային խորհրդի նախագահը, Հանրային խորհրդի գործունեությանը մասնակցում են հասարակական հիմունքներով:

13. Հանրային խորհրդի նախագահը՝

- 1) հրավիրում և վարում է Հանրային խորհրդի նիստերը.
- 2) հաստատում է Հանրային խորհրդի նիստի օրակարգը.
- 3) զեկուցում է Հանրային խորհրդի նիստի օրակարգում ընդգրկված հարցերը.

4) ներկայացնում է առաջարկություններ՝ Հանրային խորհրդի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ.

5) իրականացնում է Հանրային խորհրդի գործառույթներից և սույն աշխատակարգից բխող այլ լիազորություններ:

14. Հանրային խորհրդի անդամը՝

- 1) մասնակցում է Հանրային խորհրդի նիստերին.
- 2) ներկայացնում է առաջարկություններ՝ Հանրային խորհրդի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ.

3) ներկայացնում է հարցեր՝ Հանրային խորհրդի օրակարգում ընդգրկելու համար.

4) իրականացնում է Հանրային խորհրդի գործառույթներից և սույն աշխատակարգից բխող այլ լիազորություններ:

IV. ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

15. Հանրային խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են Հանրային խորհրդի նախագահի կողմից, ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան յուրաքանչյուր տարին երկու անգամ: Հանրային խորհրդի նիստերը կարող են հրավիրվել նաև Հանրային խորհրդի առնվազն 4 անդամների առաջարկությամբ:

16. Հանրային խորհրդի նիստերն իրավազոր են, եթե նիստին մասնակցում է Հանրային խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:

17. Հանրային խորհրդի նիստի օրակարգը կազմվում և տրամադրվում է Հանրային խորհրդի անդամներին նիստի օրվանից առնվազն 5 օր առաջ, որում նշվում են նիստերի անցկացման վայրը, օրը, ժամը, քննարկման ենթակա հարցերը:

18. Հանրային խորհրդի կողմից որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Հավասար ձայների դեպքում Հանրային խորհրդի նախագահի ձայնը վճռորոշ է:

19. Հանրային խորհրդի որոշումները ստորագրում է Հանրային խորհրդի նախագահը:

20. Հանրային խորհրդի նիստերն արձանագրվում են:

21. Հանրային խորհրդի նիստի արձանագրության մեջ նշվում է՝

1) նիստի անցկացման վայրը, ամիսը և ամսաթիվը, նիստը սկսելու և ավարտելու ժամերը.

2) նիստի օրակարգը.

3) նիստին մասնակցող Հանրային խորհրդի անդամների, հրավիրված անձանց անունները՝ հրավիրված լինելու դեպքում.

4) քննարկված հարցերը.

5) ընդունված որոշումները՝ ներառյալ տվյալ որոշման վերաբերյալ քվեարկության արդյունքները.

6) այլ անհրաժեշտ տեղեկություններ:

22. Հանրային խորհրդի նիստի արձանագրությունը ստորագրում է նախագահը:

23. Հանրային խորհրդի նիստերն արձանագրում է նիստի քարտուղարը:

24. Կոմիտեի վիճակագրական տեղեկատվության տարածման բաժինն իրականացնում է Հանրային խորհրդի քարտուղարության գործառույթները:

25. Հանրային խորհրդի քարտուղարը՝

1) նիստի օրվանից առնվազն 5 օր առաջ ապահովում է Հանրային խորհրդի քննարկմանը ներկայացվող փաստաթղթերի և նյութերի տրամադրումը Հանրային խորհրդի անդամներին.

2) ապահովում է նիստերի արձանագրության կազմումը.

3) ապահովում է Հանրային խորհրդի գործունեության մասին տեղեկատվության տարածումը.

4) Հանրային խորհրդի նախագահի հանձնարարությամբ իրականացնում է այլ լիազորություններ: